ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Հաշվետվություն թիվ 06, 23.05.2023թ.

<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ բաժնետերերի
2022թ. տարեկան ընդհանուր ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

22.05.2023թ. համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը:
2. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական հաշվետվությունները:
3. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը:
4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի: Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին, Խորհրդի կազմում ընդգրկել Ռուբեն Ինջիկյանին:
   Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ, Ռուբեն Ինջիկյան:
5. <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական արդյունքներով, սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 4.397.025 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:
6. Թողնել անփոփոխ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը:
7. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Վարչության նախագահ – գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյան